# Վարդապետության սերտում. Գնահատում 2. Ուսումնական ուղեցույց

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՁԵՌՆԱՐԿ

## Անգիր սովորեք հղումը և սուրբ գրության հիմնական արտահայտությունը

Ծանոթացեք սուրբ գրությունների վարդապետության սերտման հատվածներին և սուրբ գրությունների հիմնական արտահայտություններին: Ներբեռնեք և օգտագործեք Doctrinal Mastery բջջային հավելվածը, որը կօգնի ձեզ կրկնելիս:

| | |
|---|---|
| Ա Կորնթացիս 6.19–20 | «Ձեր մարմինները Սուրբ Հոգու տաճար են»: |
| Ա Կորնթացիս 11.11 | «Բայց դարձեալ ոչ կինն առանց մարդի, եւ ոչ մարդն առանց կնկայ, Տէրումը»: |
| Ա Կորնթացիս 15.20–22 | «Քանզի ինչպես Ադամով ամենը մեռնում են, այնպես էլ Քրիստոսով ամենը կենդանանում են»: |
| Ա Կորնթացիս 15.40–42 | Հարության ժամանակ կան փառքի երեք աստիճաններ: |
| Եփեսացիս 1.10 | «ժամանակների լրութեան տնտեսութեան համար, որ ամեն բան բովանդակուի Քրիստոսումը»: |
| Եփեսացիս 2.19-20 | Եկեղեցին «առաքեալների և մարգարէների հիմքի վերայ է շինուած. որի անկիւնի գլուխը Յիսուս Քրիստոսն է»: |
| Բ Թեսաղոնիկեցիս 2.1–3 | «Քրիստոսի Երկրորդ գալուստը չի գա, եթէ առաջ չգայ ապստամբությունը»: |
| Բ Տիմոթեոս 3.15–17 | «Սուրբ գրությունները … կարող են քեզ իմաստուն անել փրկության համար»: |
| Եբրայեցիս 12.9 | Երկնային Հայրը «հոգիների Հայրն է»: |
| Հակոբոս 1.5–6 | «Եթե մեկը ձեզանից իմաստութեան պակասություն ունի, թող խնդրէ Աստուածանից»: |
| Հակոբոս 2.17–18 | «Հաւատքը, եթէ գործ չ'ունենայ, ըստ ինքեան մեռած է»: |
| Ա Պետրոս 4.6 | «Ավետարանը [քարոզվեց] նաև մեռելներին»: |
| Հայտնություն 20.12 | «Մեռելները դատվեցան … իրանց գործերի համեմատ»: |

## Կիրառեք վարդապետությունը իրական կյանքում

- Օգտագործեք վարդապետության սերտման սուրբ գրությունների մեկ կամ մի քանի հատվածներ, որպեսզի օգնեք մեկին, ով ցանկանում է առաջնորդություն ստանալ՝ իր կյանքում կարևոր որոշումներ կայացնելիս:
- Նոր Կտակարանի վարդապետության սերտման ո՞ր հատվածները կօգտագործեիք, եթե դուք որևէ մեկին ուսուցանեիք, թե ինչ է տեղի ունենում մահից հետո Իր զավակների համար Աստծո ծրագրում: Ինչպե՞ս կարող եք օգտագործել այս հատվածները՝ մեր հանդեպ Աստծո սերը ցուցադրելու համար:

Պատրաստ եղեք կիսվելու ձեզ վրա ամենամեծ ազդեցությունը թողած վարդապետության սերտման հատվածներով: Այս հատվածն ի՞նչ է ուսուցանում ձեզ Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին:

## Հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու սկզբունքները

Կարդացեք «Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ» բաժնի 5-12-րդ պարբերությունները, որոնք գտնվում են *Վարդապետության սերտման հիմնարար փաստաթղթում* (2022):

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *New Testament Doctrinal Mastery: Assessment 2—Study Guide*-ի թարգմանությունը. Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.